25. ՋԱՆԳԻ

Կէղնի չէղնի մե հերրմ կէղնի, կունենա մեկ ախչիկրմ։

Էդ մարթը ավէի կէղնի ինքը։ Էդիկ օրվա մեկը կէրթա ավղուշի։ Էրթած տեղը էն օրը ավը ձեռք չի անցնի։ Մենակ իրեք հատ ղուռի ղաֆա[1] կը դտնե։ Էդ իրեք ղաֆեն կառնի գուքա իրեն դուռը։ Շիշը կը ղարկե մեկին՝ մեկ անգըշեն կը մտնե, էնդիեն կ'ելնե։ Մեկելինը կը բերե ղարկե՝ շիշը հեչ չի բանի։ Բերե մեկն էլ շիշը կը ղարկե՝ կէրթա, ըղուղը կը մնա շիշը։

Կըսե գի.— Էսիկ ինձի պետք է։

Բերե էդ ղուռի ղաֆեն կրակով կը խարգե, լավըմ կը սղկե, կուտա ախչկան։ Ախչիկը գոգնոցը կը լլե, կը տանի քամուն կուտա։ Քամուն տված ժամանակը իրեն պնչներեն նե կը քշե թոզը։

Ախչիկը հեչ խաբար չէղնի։

Մե քանի ժամանակ կ'անցնի, էդ ախչիկը հղի կը մնա։ Ինն ամիս ինն դախա լմննալեն վերշը՝ էդ ախչիկը կը պառկի մե տղեմ կը բերե։

Հինգ վեց օր մնալեն ետքը, տերտերները դուքան կըսեն.— Էսոր անունը ի՞նչ դնենք։

Վե՛ըը կըսեն՝ Թաթոս դնենք, վե՛ըը կըսեն՝ Մաթոս դնենք, պապը կըսե.

---

[1] Ջոր գանգ (Ս. Բ.)։

— Չէ՛, էսոր անունը դնենք Ջանգի։

Ժամանակ կէղնի, աղի պապը կը մեռնի։ Էդ աղեն էլ կէղնի տաս տասէրկու տարեկան, ախըլ բալըխ[1] կէղնի. կէրթա մեկ օր տղոց հետ խաղալու՝ կը ղարկե մեկ էրկու տղի գլուխ կը կոտրե։

Գուքան էդ տղոց մերերը կըսեն.— Ա՜յ անասի բաբասի բալլիսըղ[2] դու ինչի՞ ղարկեր իմ տղի գլուխ կոտրել ես։

Ամեն իրիկուն, աստծու իրեն օրը, մեկը գանգատ գուքա էդոր մորը վրեն։ Տղեն էլ տուն գուքա, կըսե.— Դու ինչի՞ էսոր-էնոր տղի հետ կը կռվիս, կը ծեծես։

Ջանգին կըսե մորը.— Ես չեմ խոսի, դո՞ւ կը խոսիս։ Իմ հերը վե՞վ է, օր ընձի կըսեն. «Անասի բաբասի բալլիսըղ» հա՛, հա՛, ինձի ըսե, թե չէ քու ճիտը կը կտռեմ։

Ու կը քաշե թուրը, մորը ճտի վրա բերելու կէնե։

Կըսե.— Օղո՛ւլ, կեցի ըսեմ։ Էս ինչ ժամանակին իմ հերըս ավճի էր, գնացեր էր ավղուշի, ավղուշը ձեռք չէր անցե, բերել էր իրեք հատ չոր գլոխ։ Էնոնց մեկը կրակով խարդեց, սղկեց, տվեց ընձի, ըսավ՝ տար տու քամուն։ Ես քամուն տված ժամանակս՝ թոզը պընչներես նե է մտե՝ ես խարար չեմ էղե։ Դու էնդից էղար ընձի տղա։

Կըսե.— Օր էդման է, էկե էրթանք, դու իմ մերս ես, ես քու տղեդ եմ։

Էգոնք կէրթան, կէրթան, շատ կէրթան, քիչ կէրթան, կը հասնին մե մաղարեմ։

Կըսե.— Անա, դու էստեղ կեցի, ես էրթամ ավղուշի, շեյրան, բան ռաստ գուքա, կը ղարկեմ բերեմ էստեղ, կէփենք կուտենք։

Տղեն ամեն օր կէրթա ավղուշ կը բերե, էդտեղ կուտեն։

Օրվա մեկն էլ, ավղուշեն գալած ժամանակ մաղարի էրթիքը իրեն մորը հետ մե էրիկ մարթըմ կը տեսնե։

Էդ օրը ձեն չի հանե։ Էքսի օրը էլի կէրթա ավղուշի։

Էրկու իրեք անգամ տեսած ժամանակը մորը կը հարցընե, կըսե.— Անա, ես քեզի հետ մե մարթըմ կը տեսնեմ, կը խաղա քեզ հետ, էնի վե՞վ է։

Կըսե կը.— Օղուլ, էնի վե՞վ է, դու իմ վրես իլավա[3] կէնես։

Մեկ օրըմ էլի տղեն կէրթա ավղուշի, իրիկունը գուքա։

Ջօրը դևը էդ կնկան խրատ տված կէղնի թե. «Իրիկունն օր տղեդ գուքա, դու պառկած կէղնիս դողինքով, էն կը հարցու կըսե. «Անա,

---

[1] Խելքահաս (Ծ. Բ.)։

[2] Հայրը, մայրը անհայտ (Ծ. Բ.)։

[3] Զրպարտություն (Ծ. Բ.)։

ինչի՞ ես պառկեռ», դու կը թթվիս, կըսես կը. «Ես ջա՛տ հիվանդ եմ, կարելի է էս ցավեն մեռնիմ»։ Տղեն քեղի կը հարցու. «Հապա ի՞նչ ընեմ, անա», դու կըսես. «Գնե[1] ընձի Անմահական ջուր ու խընձոր բեռ»։

Իրիկուն տղան .սվղուշեն գուքա, կը տեսնե օր մերը պառկած է, կըսե.

— Անա, ի՞նչ է էղե։

Մերը կը թթվի, կըսե կը.— Օղո՛ւլ, ես ջա՛տ հիվանդ եմ, կարելի է էս ցավեն մեռնիմ։

Տղեն կըսե.— Ապա ի՞նչ էնեմ անա, բարքըդ[2] ի՞նչ գուղե։

Կըսե.— Օղուլ, իմ բարքըս հեչ մի բան չի ուղե, միան ընձի կը բերես Անմահական ջուր ու խնձոր։ Իմ կամակս[3] էն է, օր ուտեմ սաղանամ։

Տղեն գէլնի ճամփա կէրթա։ Շատ կէրթա, քիչ կէրթա՝ կը տեսնի օր էրկու հատ ախչիկ իրենց գեղը, տան գուռը կայնել են միսաֆիրի[4] կաշեն։

Էդ ախչիկներու հերն էլ առանց միսաֆիրի հաց չի ուտե։

Եփ օր էդ տղեն գուքա էդոնց դռանը կը քըպնա, էդ ախչիկները կը վազեն, մեկը հորը խաբար կուտա կը, կըսե.— Ադա, աչքըդ լուա, մեզի միսաֆիր էկավ։

Մեկն էլ քաշե կը նե, տանի ձին կապե կը, կէրթա խոտ բերե կը. իրեն էլ հերը կանչե կը, տանի օջխի քյանարը նստեցնե կը, հարց ու բարև կէնեն կը։

Կըսե կը.— Դու բարով էկար, իմ աչքիս, իմ գլխուս վրեն էկար,— կըսե,— ախչի, հաց բերեք։

Ախչիկները չայ, հաց կ'էնեն, կառնեն գուքան. կուտեն, խմեն, վերջը հերը կը հարցու, կըսե.

— Գալըդ բարի, որդիս, էսման ո՞ւր կէրթաս առաջ բարի։

Կըսե կը.— Կէրթամ իմ մորըս Անմահական ջուր ու խնձոր բերեմ, մերըս ծանր հիվանդ է։

Ըխթիյարը կըսե կը.— Այ որդիս, դու ջաղի ղառու[5] ես ռաստ էկե, Անմահական ջուր ու խնձոր դու ո՞րդից պիտի բերես։ Օղո՛ւլ, թե ընձի անգաջ կէնես դարձի գնա։

---

[1] Գնա (Մ. Բ.)։
[2] Ախորժակ (Մ. Բ.)։
[3] Դեղ (Մ. Բ.)։
[4] Հյուր (Մ. Բ.)։
[5] Կախարդ կին (Մ. Բ.)։

Կրսե կը.— Չէ՛, պա՛պ, էրթամ պիտի։

Կրսե կը.— Օղուլ, օր կէրթաս, ճամփու վրեն մե դավռուշըմ կա, էն դավռուշ քեզի կը հարցու. «Ո՞ւր կէրթաս կը», դուն էլ կրսես թե. «Իմ մերրս հիվանդ է, պիտի էրթամ Անմահական ջուր ու խնձոր բերեմ»։ Դավռուշը կրսե կը. «Օղուլ, չես կրե էրթա»։ Դու պիտի ըսես. «էրթամ պիտի, չարեն չէղնի»։ Իրեք անգամ կը հարցու, դու էլ իրեք անգամ կրսես կը. «Պիտի էրթամ»։

Տղեն ըխթիյարի քովեն ճամփա գելլե, կէրթա կը։

Կէրթա, ճամփու վրեն դավռուշ ռաստ գուքա։

Կրսե.— Ա՜յ մանչ, ո՞ւր կէրթաս կը։

Տղեն կրսե կը.— Մերս հիվանդ է, կէրթամ Անմահական ջուր ու խնձոր բերեմ։

Կրսե.— Դու ի՞նչըխ պիտի էրթաս, օղուլ։

Կրսե.— Գիտենամ մեռնիմ՝ էրթամ պիտի։

Էդտից դավռուշը խրատ կուտա թե.— Ա՜յ մանչ, էն օր կէրթաս, ճամփու վրեն գառը կապուկ է ցածը դին, միսը դրուկ է առաջը, գելը կապուկ է վերի դին՝ խոտը դրուկ է առաջը։ Դու խոտը պիտի վերցնես դնես գառու առաջը, միսը վերցնես դնես գիլու առաջը, էման օր էրկուսն էլ չը տեսնին, օր տեսան՝ քեզի կտոր կտոր կէնեն։ Ետքը կէրթաս կը էնդին, մե ղանատլիմ[1] կա, էդ ղանատլուի առաջ ձին քշես էսղին, քշես էնդին, էման տաքցնես կը, ձին լավրմ կը քրտնի։ Ետքը էրկու կծու իղանգի կը զարկես ձիուն, դուռը կը բացվի, դու կէրթաս, էրթած ժամանակդ հեչ ետ պիտի չաշե՛ս։

Տղեն արթըխ դավռուշի քովեն գելլե։ Դավռուշի ամեն ըսածներու պես կէրթա կը տեսնի օր գառը ճամփու ցած դին է կապուկ, գելը՝ վերը դին։ Խոտը կառնե կը ցգե գառու առաջը, միսը՝ գիլու առաջը։ Կէրթա ղանատլուի դուռը։ Ձին լավրմ կը քշե, քրտնեցնե կը, ետքը էրկու կծու իղանգի կը զարկե։ Զարկելուն պես ղանատլուն կը բացվի, տղեն ձիով կէրթա ներս, ետևեն կը բռռան. «Բռնեք, իսան օղլին փախավ», հեչ ետ չի աշե։

Տղեն կէրթա ջուրը կառնի կը լլե տկի մեշ, խնձորները ծառեն կը պրծնե, դնե խուրշի մեշ, ետ կը դառնա։ Ձին էլի էդ տեսակ տաքցնե կը, ղանատլուի առաջ եփ ձիուն երկու կծու իղանգի կը զարկե՝ թռնի կը, անցնի էնդին։

Գուքա ճամփու վրեն, դավռուշն հոդ կայնած է, կրսե.

— Բերեցի՞ր մանչ։

Կրսե.— Բերեցի, դավռո՛ւշ բաբա։

---

[1] Երկփեղկյա դուռ (Ս. Բ.)։

Կրսե.— Օղուլ, մեմ էլ չէղնի, դու էդման չատի ղառու ուրմիշ[1] գաս։ Քեզի կարելի է ուրիշ անգամ էլի ղրկե, էս հեղին սալամաթ չես գա։

Կրսե.— Ի՞նչ ընեմ, իմ մերս է, ուր օր ղրկե՝ էրթամ պիտի։

Ջանգին գուքա ըխթիյարի գուռը, ախչիկները էլի կայնած են։ Մեկը կը վազե հորը քով, մեկն էլ վազե կը ձիու ղիզգինը բռնե կը։

Ախչկա հերը կը վազե, տղեն կիչեցնե կը ձիեն, միսաֆիռ կ'էնե։

Էդ գիշերը հոդ կը կենա Ջանգին։

Խուրջինը կը բանա ըխթիյարը խնձորները կառնե կը, ջուրն էլ կառնե, էգ խնձորը կը փոխե, ջրի տեղը կը լլե ուրիշ ջուր։

Առավոտ տղեն գելլի գուքա։ Ջանգին բերե կը խնձորները, ջուրը մորը քով։ Մերը կը խմե, կուտե կը, կրսե կը.— Էսի լավ չէ։

Էլի կը տքա։ Կաշեն օր սաղ էկավ տղեն։ Եփ օր կէրթա ավղուշի, դևը գուքա մորը քով, կրսե.— Ի՞նչրխ էնենք, էսի գնաց էլի սաղ էկավ։

Մերը կրսե.— Էդման չէղնի, էկե դու այան[2] ելի տղիս, ըսեմ թը էսի քեզի էրա հեր։

Էնի կրսե կը.— Լավ կէղնի, սաթրաջ[3] կը խաղանք բալքի ես կրեմ էնոր, էն ժամանակ իմ ձեռքեն գալածը կէնեմ։

Իրիկունը տղեն ավղուշեն գուքա, տեսնի կը օր մորը հետ էրդիքը մե հոգիմ կա։ Գուքա կը հարցու, կրսե.

— Անա՜, ես էսով քանի անգամ է կը տեսնիմ քեզի հետ մե հոգիմ էրդիքը կը խաղաք, էդ վե՞վ է։

Մերը կրսե.— Օղուլ, քեզեն պայեմ աստուծմենեն ի՞նչ պայեմ, էնիկ քեզի հեր պիտի էնե՞ս։

Տղեն կրսե.— Ընչի՞ չեմ էնե, ըշթա մեծ է դլխուս վերի դին։ Կանչե գա, անա՛։

Մերը կէրթա կանչե կը։

Գուքա նստի կը հերը։ Տղին կրսե.— Յարանութեն[4] էրա, ադա։

Կրսե.— Ես յարանութեն չիտեմ, բերեք քիչըմ սաթրաջ խաղանք։

Բերեն սաթրաջ խաղան կը, քանի կը խաղան՝ տղեն կը կրե հորը, մերը էնտեղ կը թթվի։

Կրսե.— Անա, ընչի՞ ես թթվե, դուն է էկե խաղանք։

---

[1] Համոզվել (Ս. Բ.)։

[2] Հայտնվել (Ս. Կ.)։

[3] Թղթախաղ (Ս. Բ.)։

[4] Խոսակցություն (Ս. Բ.)։

Կրսե.— Հերրդ կը խաղա՝ ի՞նչ կէնե, օր ես խաղամ ինչ էնեմ։

Կրսե.— Ինչի՞։

Կրսե.— Էնոր համար օր միշտ անգամ հորրդ կը կրես, մեմե դու տարվի հերրդ թող կրրե՝ մենք ուրախութեն էնենք։

— Լավ,— կրսե կը,— մեմե ես կը տարվիմ։

Կը խաղան, էս անգամին էլ տղեն կը տարվի։ Դևը կը կրե, գէլնի տղի ձեռները կը կապե ոռի ետևը՝ գութնի ղնջիլովը, գէլնի տղի ու-մուղներուն[1] դևը։ Տղին էման կը շարչրե, էման կը շարչրե օր տղի քրտինքը գէլնի իրեն կը կորցնե։

Եփ օր տղեն գյառմիշ[2] կէնե թևերը՝ ղնշիլը կը կտրե։

Էլի կը թթվին հերն ու մերը, նստին կը։

Կրսե.— Էկե, մեմե խաղանք։

Կը նստի մեմե կը խաղան։ Էլի կը տարվի Ջանգին։

Էս հեղին մերը կրսե թե.— Քեզի ի՞նչ զավթ կէնե օր կապենք։

—Յայոխի[3] թելը ընձի զավթե կը,— կրսե։

Բերե կը էս հեղ էդոր ոթերը յայոխի թելով ոռի ետևը կապե կը։ Կառնի կը էդոր թուրը, խաղե խաղ կտրե կը էդ տղին, կը լլե խուրջը, բառնա կը ձիուն, ձիու ոռին զարկե կը, կէրթա ձին։

Ձին կէրթա էդ գեղը, էդ ըխթիյարի դուռը կը կայնի։

Ախչիկները կէրթան հորը կրսեն.— Աղա՛, էն տղի ձին էկավ, ամա շատ փերուշան, վրեն քուլլի արուն է։

Կրսե կը.— Բռնեք էդ ձին։

Ախչիկներ էդ ձին բռնեն կը, նե կը քաշեն։ Բերեն խուրջին կը բանան օր, կաշեն օր էն տղին խաղե խաղ կտրտել են։

Բերեն էդոնք մե բանրմ կը փռեն, էդ տղի ջանդակը կը փռեն վրեն։ Ամեն կտոր իրար վրա կը դնեն, Անմահական ջուրը կը լլեն տղի մարմնին, մարմինը խստակ կը սաղնա, կէղնի մեկ։

Ետքը բերեն Անմահական խնձորը քթին դեմ կուտան, տղեն սաղնա նստի կը։ Բերեն խնձորմ էլ կուտան կուտե կը, կը սաղնա կը խոսի։ Կրսե կը.— Ես ո՞ւրտեղ էի, քնե՞լ էի։

Կրսե.— Չէ, քու հերրդ կտրտել էր, լցել էր էս խուրջը, ըշթտ Անմահական ջուր ու խնձոր օր դու բերել էիր, մենք քու խուրջեդ վերուցել ենք էնի։ Հիմի քեզի էդ ջրով ու խնձորով լավցուցինք։

Տղեն կէլնի կէրթա, իրեն հորն ու մորը արթըխ ձեռքեն էկածը կէնե, լավրմ կը կտրտե, բանջրի պես ջարդե կը։

Վերջը էդտից գէլլե գուքա, մեկ գեղրմ, կէղնի հորթըճի։

---

[1] Թեի ուս (Ծ. Բ.)։

[2] Ցնցել (Ծ. Բ.)։

[3] Աղեղ (Ծ. Բ.)։

Օրըմ մեծ էրթմով դուռըմ կը նստի, մե ախչիկըմ գուքա, էդ ախչըկանեն ջուր գուղե խմելու։

Էդ ախչիկն էլ շատ ռունգ կէղնի։ Էդ տղեն ամեն իրիկուն հորթերը բերե կը, գուքա էդոնց տունը պառկի, գելլե։

Օրմ էլ հորթ արծած տեղը, ինքը աֆքյարլամիշ կէղնի[1]։ Իրեն քով չպուղմ կէղնի, կը ղարկե, կ'ըսե.— Քեզի, ընձի ստեղծող աստվածը, հոս թող Ղըռ ձին ստեղծե։

Ղըռ ձին գուքա։ Էդ ախչիկն էլ արտը հաց կը տանի։

Եփ Ղըռ ձին կը հեծնի էդ տղեն՝ մեյդան մեյդան կէնե էդ դուրնի օրթալաղը։ Ըմա էդ ախչիկ կը տեսնի, օր էդ հորթըճին է։

Ախչիկը հացը տանի ու գուքա հորը տուն։ Իրիկունը հորթըճին է տուն գուքա, ախչիկը աչքը փախուցել էր տղին։ Էդ ախչկան քանի ուզելու դուքան, հերը կըսե.— Իմ ախչիկս գիտե, ում օր առնե, ես էնոր կուտամ։

Ինչափ մեծամեծ մարդիկ օր դուքան, ետ կը ղարկե, չի տա ախչիկը։

Հերը կը հարցու, կըսե.— Ա՛խչի, դու ում պիտի առնես։

Կըսե.— Ընձի թե հարցընես, ընձի կուտաս մեր դռան հորթըճուն։

Հերը վերցնե կուտա էդ հորթըճուն իրեն ախչիկը։

Հորթըճուն գուղե հարսանիք էնե հերը։

Ջանգին կըսե կը.— Չէ՛, հարսանիք չի՛ ուզե։

Կառնի իրեն նշանածը գելնի կէրթա։ Սարի գլուխ մե քյոշք ու սարամ կը շինե, կըսե կը.— Ախչիկ, դու հոս կեցի, ես կէրթամ ավղուշի։

Կէրթա ավղուշի, իրիկվան գուքա, էսպես ժամանակըմ կանցնի։ Ախչիկն էլ ցերեկը կը նստի իրեն համար յայլուխի վրեն պատկեր կը նախշե։

Տղեն իրիկուն օր գուքա, ախչիկը յայլուխը կուտա կը տղին։

Տղեն օրըմ իրիկուն տուն գուքա, շա՛տ թթված է, ախչիկը կը հարցու թե.— Այ տղա, ինչի՞ էդման թթվել ես։

Ջանգին կըսե կը.— Ի՞նչ էնեմ, մի յայլուխմ ես տվե էնոր սաբրուն էլ կորավ, թթվել եմ։

Էդ յայլուխը քամին կը քշե տանի կը ծովի ադեն[2] կը ցրգե։

Օրըմ, թագավորի տղեն իրեն լալեստնցով գելլի գուքա ծովի քյանարը պտտվելու։ Գուքա կը տեսնի օր, ծովու ադեն մե բանըմ կա։

---

[1] Կրքոտվել (Ս. Բ.)։

[2] Կղզի (Ս. Բ.)։

Կըսե.— Վեվ օր լողճի է, թող էրթա բերե։

Մե լողճիմ կէրթա բերե կը, կը տեսնի օր յայլուխ է, պատկերըմ կա վրեն, էնքան ռունգ է օր՝ թագավորի տղի խելքը կանցի, կըյնի գետին։ Բերեն էդոր սրտին ջուր զարկեն, ինչ կէնեն հնար չէղնի։

Կըսեն՝ էսի ի՞նչըխ պիտի էղնի, ի՞նչըխ պիտի չէղնի։

Կէրթան քաղքի միջին Ջադի ղառիմ կը բերեն, գուքա էդ տղի քով, կըսե.— Էսի սավդա շառի է[1], ես էսոր հնարը կը գտնիմ։

Կըսե.— Բերեք ինձի մե խնոցիմ, ես էսոր հնարը գտնիմ։

Կը հեծնի խնոցին, օձը կէնե վարոց, գելլի կէրթա դեմ էդ ախչըկա սարայը, կէրթա էդ ախչկան համոզելու։

Մեկ, էրկու օրըմ կէնա կը էդ ախչկա քով։

Էդ տղեն ավղուշեն գուքա, սաբախտան էլի կէրթա ավղուշի։

Պառավը ախչկան կը համոզե, ախչիկը խոսք կուտա թե՝ ես գուքամ։ Ջադու զառին աղջիկը կը դնե խնոցին, կառնե կէրթա։

Իրիկունը տղեն ավղուշեն գուքա, կը տեսնի իրեն ախչիկը հոդ չէ։ Սալըղ կառնի, կէրթա ծովի էնդիու քաղաքը, Ջագի ղառիի տունը, կէրթա ախչկան էնտեղ կը գտնի։

Ջագի ղառուն Ջանգին պիտի սպանե,— կըսե.

— Չէ, մի սըպանե, ես էրթամ պիտի թագավորեն էսքան փարա առնիմ։

Ջագի զառին գելլե կէրթա թագավորին, օր իր կշռանքով օսկի առնե։ Իրեն թումբանը քար կը լլե, կէրթա նստի կը կշեռքի թաթը։

Օսկին կը լլեն կշեռքի մեկ աչքը, պառավ մե աչքը։ Կը քաշեն, պառավ վեր չելլե։

Թագավորի տղեն կըսե.— Ջանըմ, էս սատկուկ պառավ ի՞նչ էղավ, օր օսկին թեթև է, պառավը ծանտռ է։

Կէրթան ջադու ղառու վրեն կաշեն օր թումբան լիքը քար է։

Ջագի ղառի գլուխը զարկել կուտա։

Կէրթան պառավի տնեն Ջանգին ու էդ ախչիկը կը հանեն։

Թագավորի տղեն կաշե ախչըկան, կաշե Ջանգուն օր, կըսե.— Ընձի իսէ, էսա ախչիկ Ջանգուն արժանի է, պետք է էսօր հարսանիքը ես էնեմ։

Օխտը օր դահոլ զուռնով հարսնիք կէնեն, կուտեն կը խմեն հասնին կը իրենց մուրազին։

---

[1] Սիրահարության փորձանք (Ս. Բ.)։